

Արձանագրություն N 3
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/11-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12 օգոստոսի 2022թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը, Ա. Սիմոնյանը, Է. Մխիթարյանը և Ս. Ալեքսանյանը

Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Բանակցությունների վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Մեծավանի ջրամբարի վերականգնման և վերազինման, Մարմարիկի ջրամբարի ջրծեծ-ջրմարիչ հանգույցի վերակառուցման, Ապարանի ջրամբարի ճնշումային թունելի մետաղյա երեսպատվածքի վերականգնման աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/11-Ա ծածկագրով ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար 12.08.2022թ. ժամը 11:00-ին տեղի ունենալիք բանակցություններին հրավիրված «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստով ծանուցել է գնահատող հանձնաժողովին, որ իր կողմից մրցույթին ներկայացված գնային առաջարկն անփոփոխ է:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/11-Ա ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների ընտրված մասնակից հայտարարել «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ -ին,
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/11-Ա ծածկագրով ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար անգործության ժամկետ չի սահմանվում:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/11-Ա ծածկագրով ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների ընտրված մասնակից «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ




Վ. Օհանջանյան

անդամներ




Ս. Ասրյան



Ա. Սինոնյան



Է. Մխիթարյան



Ս. Ալեքսանյան

Քարտուղար



Ս. Գալստյան